

ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՈՒՐՈՂԻՆԱՄԻԿ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆ



ԻՆՉ Ե ՈՒՐՈՂԻՆԱՄԻԿ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Ուրոգինամիկան հետազոտությունների համախումբ է, որը հնարավորություն է տալիս գնահատել միզապարկի ֆունկցիոնալ վիճակը:

Ցիստոմետրիան հիմնական հետազոտությունն է, որի միջոցով հնարավոր է գնահատել միզապարկի՝ հավաքված մեզը պահելու և արտամղելու կարողությունը: Հետազոտության միջոցով կարելի է պարզել անմիզապահության առկայությունը կամ միզապարկի ոչ լիարժեք դատարկումը:

ԵՐԲ Ե ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ՈՒՐՈՂԻՆԱՄԻԿ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Ուրոգինամիկ հետազոտությունը կատարվում է, երբ կան միզարձակման հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ անմիզապահություն: Անմիզապահությունը կարող է անհանգստացնել ցանկացած տարիքի կնոջ. երիտասարդների մոտ այն դիտվում է հղիությունից, ծննդաբերությունից հետո, իսկ հասուն տարիքի կանանց շրջանում խնդիրն առաջանում կամ բարդանում է դաշտանադադարի շրջանում:

Հիմնական գանգատները՝

- հազալիս, փռշտալիս, ծիծաղելիս, թեթև ֆիզիկական ծանրաբեռնվածության ընթացքում դիտվող անմիզապահություն,

- դժվարամիզություն,

- գիշերները միգելու ցանկություն,

- հաճախամիզություն կամ անմիզապահություն միգելու անզուսպ ցանկության դեպքում,

- միզուղիների կրկնվող բորբոքումներ:

Հետազոտության միջոցով ախտորոշվում է խնդրի առկայությունը և նշանակվում է համապատասխան բուժում:



ԱՐԴՅՈ՞Ք ԿԱ ԱՅԼԸՆՏՐԱՆԸ

Անմիզապահություն ունեցող ոչ բոլոր կանայք ունեն ուրոգինամիկ հետազոտության կարիք:

Եթե դեղորայքային բուժումը, հեղուկների քանակի քչացումը և կոնքի մկանների մարզման վարժություններն արդյունավետ չեն, ապա պետք է կատարել ուրոգինամիկա:

ԻՆՉՊԵՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆԸ

Հետազոտությունից առաջ հատուկ սննդակարգ պահպանելու կամ սոված ներկայանալու կարիք չկա: Միզապարկը պետք է դատարկել հետազոտությունից 1 ժամ առաջ:

ԻՆՉՊԵՄ Ե ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆԸ

- Առաջին հատվածը ուրոֆլուումետրիան է, որի ընթացքում կինը միգում է հատուկ տարայի մեջ: Այդ ընթացքում սարքը գնահատում է, թե արդյո՞ք միգելու ընթացքում միզապարկը լիարժեք դատարկվում է, միզարձակումը ընդհատումներով է, թե՞ անընդհատ:

- Երկրորդը ցիստոմետրիան է, որի ընթացքում տեղադրվում են երկու տարբեր կաթետերներ, մեկը՝ միզապարկում, մյուսը՝ հեշտոցում (եթե արտահայտված իջեցումներ չկան): Արտահայտված իջեցումների դեպքում կաթետերը դրվում է հետանցքում. նպատակը ներմիզապարկային և ներորովայնային ճնշումների ապահովումն է:

Գործողության ավարտից հետո՝ կաթետերները դրված վիճակում, կինը կրկին միգում է չափիչ տարայի մեջ, ապա կաթետերները հանվում են:

Հետազոտությունը տևում է մոտ 30 րոպե, անցավ է և կատարվում է առանց ցավազրկման: Կինը կարող է միայն որոշակի անհանգստություն ունենալ:

Հետազոտության պատասխանը պատրաստ է լինում նույն պահին, հետևաբար բժիշկը կարող է դրա հիման վրա անմիջապես բուժում նշանակել:

ԻՆՉ ԿԱՐՈՂ Ե ԼԻՆԵԼ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Հետազոտությունից հետո մեկ-երկու օր կինը կարող է միգելիս որոշ անհանգստություն ունենալ: Բակտերիաների ներթափանցումը կանխելու նպատակով հետազոտությանը հաջորդող 2 օրերի ընթացքում պետք է մեծացնել ընդունվող հեղուկի քանակը: Շարունակվող գանգատների դեպքում պետք է դիմել բժշկի:

Անգամ խիստ ստերիլ պայմաններում իրականացված հետազոտության դեպքում կարող է միզուղիների բորբոքում առաջանալ: Նման դեպքերում բժիշկը կարող է միզուղիների բորբոքման բուժում նշանակել:

